

Նացի Գերմանիոյ եւ Փան-Թուրանա- կաններու Ծրագիրները Կովկասի մէջ (1941 թ.)

ԶԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ

1939 թ.ի Օգոստոսի 23-ին ստորագրուած էր Գերմանո-Սովետական ոչ յարձակման պայմանագիրը: Հակառակ այդ համաձայնագիրին սակայն, Ատոլֆ Հիթլերի ղեկավարած Գերմանիան 1941 թ.ի Յունիսի 22-ին ներխուժեց Սովետ. Միութեան սահմաններէն ներս, իրագործելով «Պարսպարոս» ծրագիրը:

Նացի Գերմանիան իր նախայարձակման շնորհիւ յաջողութիւններ արձանագրեց Արեւելեան ճակատին վրայ՝ Սովետ. Միութենէն ընդարձակ հողամասեր գրաւելով: Պատերազմի առաջին ամիսներուն յաջորդարար ինկան Օտեսա, Բիււ, Խարքով եւ այլ քաղաքներ: 1941 թ.ի Սեպտեմբերի 2-ին գերմանացիք Լենինկրատէն 20 մղոն հեռաւորութեան վրայ էին, իսկ 2 Հոկտեմբերին՝ Մոսկուայի ճակատամարտը սկսաւ: Սովետները դիմադրեցին: Լենինկրատ չինկաւ: Մոսկուայի ճակատամարտը այս վերջիններուն յազմանակով աւարտեցաւ 1942 թ.ի Փետրուարին:

1941 թ.ի Նոյեմբերին Կովկասի անցքի բանալին եղող քաղաքներէն՝ Ռոստով ինկաւ նացիներուն ձեռքը, բայց շուտով վերագրաւուեցաւ Կարմիր Բանակին կողմէ: 1942 թ.ի գարնան՝ Հիթլեր ձեռնարկեց իր երկրորդ յարձակողականին, նպատակադրելով հասնիլ Անդրկովկասի քարիւղի հորերուն:

Նացի ղեկավարութիւնը՝ «Արեւելեան գրաւեալ շրջաններ»ուն (ինչպէս իրենք սովոր էին կոչել Սովետ. Միութենէն բռնադրաւուած հողամասերը) նկատմամբ ծրագիրներ մշակած էր:

Այս ժամանակաշրջանին՝ Նացի Գերմանիոյ ղեկավարները

յատուկ արտայայտութիւններ կ'ունենային Խրիմի, Հիւսիսային Կովկասի եւ Անդրկովկասի ժողովուրդները սիրաշահելու մտօք:

Գերման ղեկավարներու՝ աղզային ազատազրութեան, ինքնորոշման եւ այլ խոստումներուն ետին թաքնուած էր վերոյիշեալ ժողովուրդները շահագործելով իրենց նպատակակէտին հասնելու քաղաքականութիւնը: Անոնք կը յուսային նման խոստումներով իրենց շարքերը ներգրաւել երկրի եւ արտերկրի հակա-սովետ. անջատողական տարրերը: Նպատակակէտը Պաքու հասնիլ էր եւ օգտագործել Անդրկովկասի հում նիւթերը:

Արդարեւ, «Արեւելեան դրաւեալ շրջաններ»ուն աղզարնակչութեան վերապահուած ճակատագիրը ճշդորոշուած էր «Օսթ» ծածկազրով ծանօթ ծրագրով, որ կազմած էր Կեսթափոյի պետ Հիմլերի ղեկավարած ապահովութեան գլխաւոր վարչութիւնը՝ Սովետ. Միութեան վրայ կատարուած նախարարական մէջնախօսակցութեան վրայ կատարուած նախարարական մէջնախօսակցութեան արդիւնքով: Թէեւ «Օսթ» ծրագիրը ցարդ չէ յայտնաբերուած, այսուհանդերձ՝ այլ փաստաթուղթեր այդ ուղղութեամբ դադափար մը կրնան տալ: «Արեւելեան դրաւեալ շրջաններ»ու գերման նախարարութեան առաջին գլխաւոր քաղաքական վարչութեան րաժնի պետ Դոկտոր Վետցելը՝ 27 Ապրիլի, 1942 թուակիր գրաւոր զիտողութիւնը «Օսթ» դադոնի ծրագրին վերաբերեալ՝ յատկանշական է: Յիշեալ փաստաթուղթը կը խօսի ոռոսերու, ուքրանացիներու եւ սլավոնական այլ ժողովուրդներու, ինչպէս եւ կովկասեան ժողովուրդներու, մասնաւորաբար հայերու ոչնչացման անհրաժեշտութեան մասին: Փաստաթուղթերէն յայտնի կ'ըլլայ թէ «Օսթ» ծրագրով՝ նացիները կը միտէին բռնագրաւել Կովկասը եւ ոչնչացնել Սովետ. Հայաստանի աղզարնակչութեան մեծ մասը, իսկ ողջ մնացածները լիովին զրկել պետական որեւէ իրաւունքէ, աղզային մշակոյթէ, մայրենի լեզուէն, զանոնք «վերածելով իրաւագործ ստրուկներու անձեւ զանգուածի»: Կենդանի մնացած հայերը պիտի զրկուէին սերնդազորութեան հնարաւորութենէ եւ երեք-չորս տասնամեակ իրր աժան բանուորական ոյժ պիտի ծառայէին գերմաններուն, մինչեւ իրենց վերջնական չքացումը¹:

Գերմանացիք իրենց ծրագրի իրականացման ճանապարհին արդէն իսկ սկսած էին շատ խիստ վերաբերմունք կիրարկել իրենց դէմ թշնամական դիրք ճշդողներուն նկատմամբ: Ստորեւ՝ 12 եւ 17 Սեպտեմբերի, 1941 թուակիր վաւերաթուղթերու բովանդակութիւնը այդ կը հաստատեն:

1. Տես՝ Հրաչիկ Սիմոնեան, Սփիւռքահայութիւնը Սոցիալ-Քաղաքական Պայքարի Ուղիներում, Երևան, 1968, էջ 79.80:

Ռէյնհարտ Հայտրիխ, որ պետն էր էս.էս.ներու ապահովութեան սպասարկութեան, կամ՝ S.D.ի (Sicherheitsdienst), Սովետ. Միութենէն գրաւեալ շրջաններու բնակչութեան մասին 12 Սեպտեմբերի, 1941 թուակիր նոր ուղեցոյց-հրահանգ մը կը ղրկէր, ուր կը ղզուշացնէր որ «... իսլամները պէտք է չփոթուէին հրեաներու հետ: Ուքրանացիները, ճերմակ ոռուսերը, ազրայէյճանցիները, հայերը, վրացիները եւ հիւսիսային կովկասցիները պէտք է «վերաբերուէին (նախապէս տրուած) հրահանգին համաձայն» եթէ միայն անոնք ծայրայեղ պոլշեիկներ էին: Ամենէն կարելորդ, գնդակահարութիւնները պէտք է կատարուէին կայաններու մէջտեղը»²:

1941 թ.ի Սեպտեմբերի 17-ին գրաւեալ շրջաններէն ղրկուած տեղեկագիրը մը Պերլինի կը հաղորդէր. «Պոլշեիկեան աշխատանքը կը կատարուի հրեաներու, ոռուսերու, վրացիներու, հայերու, լեհերու, լատվիացիներու, ուքրանացիներու, եւ այլոց կողմէ»³:

1941 թ.ի Նոյեմբերի 8-ին տեղի ունեցած համաժողովի մը ընթացքին կատարած դիմումներէն կը պարզուէր որ գրաւեալ շրջաններու ժողովուրդներուն դէմ գործադրուած խժուժութիւններուն ղուգահեռ՝ նացի ղեկավարները կը ձգտէին առաւելագոյն չափով շահագործել տեղի արտադրութեան հնարաւորութիւնները: Գերմանիան՝ «Արեւելեան գրաւեալ շրջաններ»էն հնարաւորին չափ աժան սննդամթերք պիտի ապահովէր, ի գին տեղացի բնակչութեան կեանքի ցած մակարդակին⁴:

Կէօրինկի «Կանաչ Թղթապանակ» վաւերաթուղթին մէջ արտացոլուած էր Սովետական Միութեան սահմաններէն ներս ազգամիջեան կռիւներ յարուցանելու յոյսը: Այստեղ՝ Կովկասի մասին ըսուած է. «Բնիկները (վրացիները, հայերը, թաթարները եւ այլերի) եւ ոռուսները միջեւ եղած հակասութիւնը պէտք է օգտագործել մեր շահերի օգտին»⁵:

«Բաժնէ որ տիրես»ի քաղաքականութեամբ, եւ շրջանի ժողովուրդներու հակամարտութիւնները քաջալերելու մտօք ճամբայ կ'ելլէր Նացի Գերմանիան դէպի Կովկաս: Մինչ մէկ կողմէ դադտնի ծրագիրները եւ հրահանգները կը մշակուէին, անդին կը շարունակուէր

2. Paul Hilberg, **The Destruction of European Jews**, Chicago, 1961, p. 223.

3. Նոյմը:

4. Alex Dallin, **German Rule in Russia**, London, 1957, p. 329.

5. Քնարիկ Գրիգորեան, Հայ ժողովրդի Մասնակցութիւնը Կովկասի Պաշտպանութեանը (1942 թ. Յուլիս - 1943 թ. Հոկտեմբեր), Երևան, 1971, էջ 20:

«խոստումներու» քաղաքականութիւնը՝ սիրաշահելու համար այն տարրերը, որոնք կրնային օգտակար ըլլալ Գերմանիոյ, որպէս անոր շահագործած բազմաթիւ միջոցներէն մէկը, հասնելու իր նպատակակէտին:

Պերլինէն՝ բացայայտ կամ ծածուկ կերպով կատարուած խոստումները, արտասահմանեան խրիմեցի, հիւսիսային կովկասեան կամ անդրկովկասեան նախկին իշխանաւոր տարրերը շահագործելու ճիգերը, չէին վրիպել Արեւմտեան թէ՛ Սովետական դադտնի լրտեսական սպասարկութեանց, եւ հուսկ՝ միջազգային մամուլին ուշադրութենէն:

1941 թ.ի ամբան Լոնտոնի «Թայմզ» ազդեցիկ օրաթերթը, ինչպէս նաեւ «Տէլլի Թելեկրաֆ» եւ «Քրիսչըն Սայենս Մոնիթըր» թերթերը՝ վերոյիշեալ տարրերու, որոնց շարքին հայերու եղած խոստումներուն եւ օգտագործման կ'անդրադառնային⁶: Լոնտոնի Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ ղեկավարուած «Հայկական Պատուիրակութեան» անունով ժիրայր Միսաքեան հերքումներ կը ղրկէր նոյն թերթերուն («Թայմզ», 19 Յուլիսի, 1941-ի թիւ) եւ լուսարանութիւն տալու համար՝ Բրիտանիոյ արտաքին դործոց նախարար Իտընէն տեսակցութիւն կը խնդրէր, նամակով մը վստահեցնելով հայոց հաւատարմութիւնը դաշնակիցներու դատին հանդէպ: Տեսակցութիւնը անհրաժեշտ չէր տեսնուել⁷: Սակայն Ֆորէյն Օֆիսը Անգարայի Բրիտանական ղեսպան Սըր Հիւկըսընէ 22 Սեպտեմբերի, 1941 թուակիր հեռագիր մը (ըստ որուն, թրքական ազդիւրներու համաձայն՝ Կովկասի մէջ «չատ մը ցեղեր եւ ցեղախումբեր գերմանացիներուն վարձկան են» եւ թէ անոնց պարագլուխները Թուրքիոյ մէջ էին) ստանալէ ետք, 24 Սեպտեմբերին կ'եզրակացնէր թէ նման բան մը հնարաւոր էր՝ բայց անհաւանական. միւս կողմէ՝ գերմանները սոյն

6. «Times», London, 24 June, 1941; «The Daily Telegraph», London, 24 July, 1941; «Christian Science Monitor», 24 July, 1941.

7. F. O. 371/27056 ժ. Միսաքեանին պատասխանել առաջ, Ֆորէյն Օֆիսը՝ 1941 թ.ի Օգոստոսին ֆնուրիւմ մը կը բանար այս հարցերու մասին ու կ'արձանագրէր թէ Միջին Արեւելի Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ Միջին Արեւելի Ընդհարմամատարին եւ Անգլիական Գաղտնի Սպասարկութեան վստահեցուցած էր իր հաւատարմութիւնը դաշնակիցներու դատին եւ յայտնած թէ կ'ուզէ գործակցիլ աւվետներուն հետ, ինդրելով անոնցմէ որ Սովետ. Միութեան հայերու ապագայի առնչութեամբ ապահովութիւններ տրուին: Բրիտանիոյ պատերազմական նախարարութիւնը եւ Գաղտնի Սպասարկութիւնը արտաքին նախարարութեան հետ խորհրդակցելէ յետոյ որոշած էին Հ. Յ. Դաշնակցութեան հետ իրենց յարաբերութիւններու ընթացքը դանդաղեցնել:

ցեղերուն արտերկրի քարտեղալ անդամներուն մօտեցած էին Կովկասի մէջ խնդիրներ յարուցանելու համար, եւ թէ՛ «անկասկած Դաշնակ ղեկավարները ասոնց մէջ են»⁸: Ապա՝ իրենց դաշնակից Սովետները չնկատեցնելու մտօք անդլիացիք իրենց յարաբերութիւնները կը խզէին Հ. Յ. Դաշնակցութեան հետ⁹:

Ռոստով քաղաքը Զօր. Բլէյսթի գերման ուժերուն ձեռքը իյնալէն քիչ առաջ, ամերիկեան «Նիուզուիք» շաբաթաթերթը իր 12 Նոյեմբերի, 1941 թուակիր համարով՝ «Հայկական Սամաճիկ Պետութիւն» խորագրով լրատուութիւն մը կը հրատարակէր, որ կը հրահրէր այդ մասին եղած նախկին լուրերը: Թերթը կը զրէր. «Քանի Մերձաւոր Արեւելքի տաղնապը կը դարգանայ, նացի հինգերորդ զօրասիւնի գործունէութեան փաստեր փնտոցէք Թուրքիոյ եւ Սուրիոյ [մէջ ընկող] Հայոց կողմէ: Նացիները ընտրած են Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կամ «Դաշնակ» կուսակցութիւնը իրենց հինգերորդ զօրասիւնի գործը տեսնելու: Այս ծայրայեղ ազգայնական կազմակերպութիւնը իր կեդրոնատեղին Զուլիցերիայէն Պերլին փոխադրած է: ... Նացիները Դաշնակներուն խոստացած են ինքնավար պետութիւն մը, Սրուաթիոյ նման, իրենց գործակցութեան փոխարէն»¹⁰:

Պատերազմի քարոզչական մթնոլորտին մէջ դրուած վերոյիշեալ տեղեկատուութիւնը շարք մը անճիշդ տեղեկութիւններ (Թուրքիոյ մէջ հինգերորդ զօրասիւնի հարց, կեդրոնատեղիի հարց) բովանդակելով կամ ընդհանրացումներ կատարելով հանդերձ, կը ցոյցնէր եւրոպական ցամաքամասի՝ Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավար տարրերուն նացիներու հետ գործակցութեան մասին ամերիկեան հանրային կարծիքին մօտ տիրող սպաւորութիւնը:

Իսկ Սուրիոյ մէջ պատահած էին կարգ մը զէպքեր:

Մուսոլինիի Ֆաշիստ Իտալիոյ գաղտնի սպասարկութիւնները Յունաստանէն եւ իտալական դաղութ եզոզ Հոռոս կղզիէն հայ երիտասարդներ Սուրիա կը զրկէին իբր լրտես: Այս երիտասարդները՝ ընդհանրապէս Մեծ Եղեռնէն փրկուածներ, որոնք իտալական հոգածութեամբ վերապրած էին, արարբերէն լեզուին անտեղեկալ, օդա-

8. F. O. 371/29490/N5537/78/38.

9. F. O. 371/34964.

10. **Armenian Puppet State**, «Newsweek», 12 November, 1941, quoted in the U. S. Congressional Record, 79th Congress, First Session, Remarks of Rep. Frank E. Hook, May 4, 1945 (653929/12451).

նաւերէ՛ անկարգելով Սուրիա կ'իջնէին իրենց վստահուած առաքելութիւնը կատարելու :

Սուրիոյ Հ. Յ. Դաշնակցութեան կոմիտէն համաձայնութիւն մը ունէր անգլիական իշխանութեան հետ : Ըստ Ա. Ծառուկեանի՝ «Մեզի եկող գերմանական լրտեսներ կը յանձնենք իրենց, քանի մը շարաթ կը պահեն, եւ յետոյ պարտադիր բնակութեան կը դատապարտեն Լիբանանի մէջ գիւղ մը, ապրուստի համար ամսական 300 ոսկի վճարելով անոնց»¹¹ : Այսպէս եղած էր երկու հայ տղոց պարագային :

Սակայն տարբեր եղաւ պարագան Յունաստանէն եւ Հոռոզէն առաքուած հինգ հայորդիներու, որոնցմէ մէկը խտալահայտակ : Անոնք Սուրիա իջնելէ ետք, Հալէպ դացած, եւ «ապաստանած են հայու մը տունը, որ խոստացած է իրենց ինքնութեան թուղթեր ապահովել» : Անոնցմէ մէկը միայն Հ. Յ. Դաշնակցութեան անդամ էր : Ուստի՝ կը դիմէ կուսակցութեան ակումբը, զաղտնի ապաստանարան մը խնդրելով՝ որուն համար պատրաստակամութիւն կը յայտնէ վճարելու¹² :

Անդրանիկ Ծառուկեան կը պատասխանէ. «Ակումբը դրամով մարդ չի պահեր, բայց խնդիրը հող չէ : Եթէ երեք օրէ ի վեր քաղաքն էք, անկարելի է որ աննշմար անցած ըլլաք : Լրտեսներ կը վխտան քաղաքին մէջ : Ու յետոյ, քանի որ կուսակցական ես, դիտցիր մեր կուսակցութեան դիրքը : Մենք Գերմանիոյ դէմ ենք եւ Դաշնակիցներուն հետ : Ձեզ զրկողը ով ալ եղած ըլլայ, Դրոն կամ ուրիշ մը, այստեղ չէք կրնար «աշխատիլ»...»¹³ :

Հայ տղաքը, առժամաբար կը պահուին դաշնակցականի մը գործատեղիին մէջ, սակայն մինչ կարգադրութիւններ կ'ըլլային որ անոնք նախորդներուն նման յանձնուէին անգլիացիներուն, յաջորդ օր կը ձերբակալուին Մարտնչող Ազատ Ֆրանսայի իշխանութեանց մասնաւոր սպասարկութեան կողմէ : Կը դատուին եւ կը զնդակահարուին իբր լրտես¹⁴ : Անոնց օգնած ըլլալու ամբաստանութեամբ կը ձերբա-

11. «Նայիրի» շաբաթաթերթ (Պէյրուք), 25-րդ տարի, քիւ 7-8, 30 Յունիսի, 1980, էջ 2-3 :

12. Նոյնը, էջ 2 :

13. Նոյնը : Այս մասին նաեւ տես՝ Մ. Սեպուհ, Հինգ Հայորդիներու Գնդակահարութիւնը Հալէպի Մէջ, «Նայիրի», 9-րդ տարի, քիւ 35, 31 Դեկտեմբերի, 1961, էջ 6.7 :

14. Գնդակահարուած երիտասարդներէն մէկն էր իտալահայտակ Մկրտիչ Փելքեֆեանը, որուն մայրը՝ պուրտուրցի Զիւմպիլի Փելքեֆեան, Հռոդոսէն, 1956 եւ 1957 թթ. ուն դէպի Հալէպ իր քննապարհին վրայ, ուր կ'երթար իր գաւկիմ անհիւնները փնտռելու, իջեւանած է մեր բնակարանը : Զիւմպիլի Փելքեֆեան յաջ-

կալուին եւ կը խոչտանգուին այլ հայեր, որոնք ապա ազատ կ'արձակուին փաստի շոյուրթեան պատճառով¹⁵ :

Անդրանիկ Ծառուկեան, որ այն օրերուն գործօն ղեկավար կուսակցական էր, Սուրիոյ Հ. Յ. Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի գիրքը կը բացատրէ հետեւեալ կերպ .

«Գրաւեալ պալքաններէն մէկէ աւելի անգամներ Դրոյի կողմէ «չօչափուեցաւ» Սուրիոյ Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութիւնը բայց միշտ, պատասխանը եղաւ մէկ եւ անվերաքննելի . — Մենք Դաշնակիցներուն հետ ենք, ու մինչեւ վերջ հաւատարիմ պիտի մնանք, ինչ ելք ալ որ ունենայ պատերազմը»¹⁶ :

Ա. Ծառուկեանի վերոյիշեալ հաստատումը կը բացայայտուի նաեւ Միջին Արեւելքի դաշնակցական մամուլէն : Սովետ . Միութեան վրայ դերման նստալարձակումէն ետք՝ Միջին Արեւելքի երկիրներուն մէջ Հ. Յ. Դաշնակցութեան գիրքին մասին քանիցս «Ազգակ» գրած է : «Ազգակ» նշած էր թէ «գրեթէ բոլոր դաշուքներուն մէջ հայ ժողովուրդը իր շահը դաշնակիցներուն յաղթանակին մէջ կը տեսնէ»¹⁷ : «Մեր Դիրքը» խորագրով առաջնորդողի մը մէջ «Ազգակ» կը գրէր . «Ա. Ռուսիա դեմոկրատիներու կողքին կը կռուի մարդկային ազատութիւններու համար : Պարզ է, որ հայ ժողովուրդի ազատութիւնը պիտի զայ դաշնակիցներու յաղթանակին շնորհիւ»¹⁸ :

Համաշխարհային Բ. Պատերազմի նկատմամբ Հ. Յ. Դաշնակցութեան ճշգրտ գիրքորոշումին մէջ երկուութիւն մը կար : Ա. Ծառուկեան առ այդ կը վկայէ . «Յայտնի իրողութիւն է, թէ Եւրոպայի գրաւեալ շրջաններուն մէջ կազմակերպեալ գործակցութիւն մը ստեղծուած էր հիթլերական ուժերուն հետ, Դրոյի գլխաւորութեամբ : Այս գործակցութեան դէմ էր Հ. Յ. Դ. վերին Մարմինը

ղեցաւ 1961 թ.-ին իր բնակավայրը՝ Լաքիմա (Խալիխ) փոխադրել իր գաւիին եւ անոր ընկերներուն ահիւնները : Խալիկան կառավարութիւնը ոսկեայ շքանշանով պատուեց Տիլիմ Փելիբեկեանը, իսկ Խալիոյ համար զոհուած հայ տղոց ահիւնները արժանացան զինուորական պատիւներու (Զ. Մ.) : Այս մասին նաեւ տես՝ Վահրամ Մալիան, Հայու Բեկորներ, Երեւան, 1967, էջ 34-39, «Ռուսացի Մայրիկը» խաբարուած պատմութիւն :

15. «Նայիրի» շաբաթաբերք, 9-րդ տարի, քիւ 36, 7 Յունուարի, 1962, էջ 2-3 :

16. Նոյնը, էջ 2 :

17. «Ազգակ» օրաթերք (Պէյրուք), 11 Նոյ.ի, 1941, քիւ 178 (3312) :

18. Նոյնը, 23 Ապրիլի, 1942, քիւ 32 (3426) :

պաշտօնապէս, եւ Սուբրիոյ Շրջանի Կ. Կոմիտէն ԳՈՐԾՆԱՊԷՍ»¹⁹ :

Զօր. Էտուրնի Սփիրզ՝ Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Անթընի Իտընի ղրկած խորհրդապահական իր 29 Յունիսի, 1944 թուակիր տեղեկագրին մէջ այդ երկուութեան բացատրութիւն մը կու տայ: Ան կը գրէ թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը Գերմանիոյ համակիր դարձաւ Հիթլերի իշխանութեան գլուխ դալին մինչեւ 1939 թ.: Ապա՝ կ'աւելցնէ. «Ռուսօ-Գերման ոչ-նախապարձակման ուխտը եկաւ իբր վատ դարթօնք մը, եւ դաշնակները (այդպէս կ'ակնարկէ Հ. Յ. Դաշնակցութեան, Զ. Մ.) շուարած՝ տեսնելով որ ան որ զիրենք պիտի պաշտպանէ, եւ իրենց գլխաւոր թշնամիներէն մէկը յայտնապէս մէկ դատ կը պաշտպանէին, իրենց համակրանքը ուղղեցին Արեւմտեան պետութիւններուն: Երբ Ռուսիան յարձակման ենթարկուեցաւ, Գահիրէի Դաշնակ Կեդրոնական Կոմիտէն (ըսել կ'ուզէ Բիւրօն, Զ. Մ.) որոշեց սովետներուն հետ իրենց նախկին տարբերութիւնները մոռացութեան տալ եւ Անգլօ-Ռուս դաշնակցոյններուն հետ ուղեկցիլ: ... 1941 թ.ի վերջերուն Կեդրոնական Կոմիտէի ղեկավար ազդեցութիւնը իր զանազան ենթակոմիտէներուն վրայ սկսած էր տկարանալ, գլխաւորաբար անոնց հետ հաղորդակցութեանց բնական կապ չկարենալ պահելուն համար, նաեւ մասամբ՝ քանի ձախողեցան սովետներուն հետ համաձայնութեան մը գալու կամ Միացեալ Ազգերէն գործօն թիկունք մը ստանալու»²⁰ :

Հայկական Սովետական Հանրապետարանը կը հաստատէ թէ ամբողջ դաշնակցական ղեկավարութիւնը չէր նացիներու հետ գործակցողը. «Երկրորդ Համաշխարհային Պատերազմի տարիներին Դ[աշնակցութեան] քննչ ղեկավարներ համազորակցեցին գերմանական» Փաշիզմի հետ՝ յոյս ունենալով Գերմանիոյ յաղթանակի դէպքում Հայաստանում վերականգնել իրենց իշխանութիւնը» (ընդգ. մեր կողմէ, Զ. Մ.)²¹ :

Դաշնակցական պատմագիր Սարգիս Աղամեանի համաձայն, Դրոյի բանակցութեանց մանրամասնութիւնները «Հայ Ազգային Խոր-

19. «Նայիրի» շաբաթաթերթ, 9-րդ տարի, քիւ 36, 7 Յունուարի, 1962, էջ 2:

20. F. O. 371/40001/A. F. No. 149/E 4003. Զօր. Սփիրզի տեղեկագրին համար տես՝ Զ. Մսրբեան, Մկրտիչ Մսրբեան եւ իր Ազգային-Քաղաքական Գործունէութիւնը, Պէյրութ, 1981, էջ 233-245:

21. Հայկական Սովետական Հանրապետարան, 3-րդ հար., Երեւան, 1977, էջ 285:

հուրդի եւ նացի բարձր հրամանատարութեան հետ դադանի են»²²։

Վերոյիշեալ երկուութեան ստեղծած կասկածի մթնոլորտին մէջ, «Նիուզուիք»ի գրութեան լոյս տեսած օրն իսկ, Երուսաղէմ հրատարակուող «Փալըսթայն Նիուզ» թերթը կը հրատարակէր յօդուած մը՝ «Հիթլերի Կովկասեան Ե. Զօրասիւնը» խորագրին տակ։ Այդ գրութիւնը, զոր ստորեւ կը մէջբերենք, կը ցոլացնէր դաշնակից երկիրներու մամուլին մտահոգութիւնը Կովկասի ճակատադիրին նկատմամբ։

«... Կովկասի տիրապետութիւնը ունենալ Հիթլերի համար կենաց եւ մահուան խնդիր է։ Կովկասի քարվազին բացարձակ անհրաժեշտութիւնը Հիթլերը մղեց յարձակելու սովետներուն վրայ։

«Հիթլեր իր փառասիրութիւններուն համար Կովկասի ներկայացուցած կարեւորութեան դիտակցած էր շատ տարիներ առաջ։ Այս պատճառով հոն Ե. Զօրասիւն մը կազմակերպելու իր ճիգերը աւելի մեծ եզան քան աշխարհիս որեւէ մասին մէջ։

«Հետաքրքրական է նշել, թէ համաձայն Կովկասէն դարձող ականատեսներու, խանդավառութեան մասնաւոր ալիք մը անցնելով Սովետական Հայաստանի վրայէն դրուած էր Ռուսաստանի բնակչութեան այս մասը, որուն վրայ դրած էին գերմանացիք իրենց ամենէն խանդակաթ յոյսերը։

«Հայոց պատասխանը դիրքի մը հրատարակութիւնը եղաւ, տպուած ո՛չ թէ Սովետ. Միութեան, այլ Մ. Նահանգներու մէջ եւ նուիրուած Ա. Ընդհանուր Պատերազմի ընթացքին տեղի ունեցած հայկական ջարդերուն։

«Գիրքին հեղինակը կ'ապացուցանէ թէ ջարդերը կազմակերպուած են գերման սպայակոյտին կողմէ, որ կը ցանկար «արքունի դրաման» աւազակութեամբ ձեռք անցընել հայկական հարստութեանց սեփականացումը եւ ատով վճարել թրքական բանակի եւ գերմանական առաքուած ուժերու ծախսերը։

«Այս գիրքի հրատարակութիւնը զգայացունց տպաւորութիւն արթնցուց ո՛չ միայն Սովետ. Միութեան սահմաններուն մէջ բնակող հայերուն, այլեւ ամբողջ աշխարհի հայերուն մէջ։ Հայերը հասկցան թէ ի՛նչ կը նշանակէ գերմանական յաղթանակ մը եւ այս պատճառով է որ հայ զուռները լաւազոյններէն են Կարմիր Բանակին մէջ»²³։

22. Sarkis Atamian *The Armenian Community*, New York, 1955, p. 399.

23. Տես՝ «Հարթօֆ» օրաթերթ (Պէյրուք), 12 նոյ.ի, 1967, քիւ 41 (8988), էջ 3։

Գերմանիոյ կազմակերպած նախաարձակումը Սովետ. Միութեան դէմ, եւ անոր սկզբնական շրջանի ձեռք բերած յաջողութիւնները՝ թուրքերու հետաքրքրութիւնը սրեց Կովկասի եւ Սովետ. Միութեան մէջ բնակող իրենց ցեղակիցներուն նկատմամբ: Անգարայի մէջ շատ մը թուրք պետական անձնաւորութիւններ կը հետեւէին Աթաթիւրքի փոքր-թրքական բանաձեւին, որ ըստ իրենց ծաւալապաշտական շէր, թէեւ այս նոյն մարդիկն էին որ իրագործած էին Սուրիոյ Ալեքսանտրեթի Սանճաքին կցումը Թուրքիոյ: Բայց միեւնոյն ժամանակ այլ քաղաքագէտներ, որոնց մէջ ՍՍՀՄ-է տարազիր քաղաքական դէմքեր, որոնցմէ ոմանք Թուրքիոյ մէջ համբաւի ալ տիրացած, մասնաւոր հետաքրքրութիւն մը կը ցուցարբէին, առաջին՝ մօտակայ թրքօ-խլամական շրջաններուն (Ուրիմ եւ Ազրպէյճան), երկրորդ՝ Կովկասին, որպէս ամբողջութիւն մը, եւ երրորդ՝ սովետական թուրքերու եւ թաթարներու ճակատադրին հանդէպ: Ասոնց ակնարկելով է որ 1941 թ.ի Օգոստոսի 5-ին Գերմանիոյ Անգարայի մօտ դեսպան Ֆոն Փափեն Պերլին կը հռազդէր թէ թուրքեր այդ շրջանը կցել կ'ուզեն, ի մասնաւորի Պաքուի նախահանգներուն տիրանալու համար:

Կազմուած էր «Մասնագէտներու Կոմիտէ» մը, որուն նպատակն էր մինչեւ Կասպից Ծով Թուրքիոյ միացած տեսնել²⁴: Այս խումբի ղեկավարն էր Սթամպուլի երեսփոխան Ծիւքրիւ Ենի Պախլա (ձաղումով թաթար), որ իրեն գործակից ունէր հայաստանէն՝ վեր Փաշայի եղբայրը՝ Նուրի Փաշան, Փրոֆ. Զեքի Վելիտէն (բաշկիր), եւ Ահմետ Ճաֆեր (խրիմցի): Այս խումբին մէջ պէտք է դասել նաեւ Քասպուլի մօտ Թուրքիոյ դեսպան Մեմուհ Շելքեթը եւ Զօր. Հիւսէյն Հիւսնի Էմիր էրքիլեթը (ձաղումով թաթար)²⁵:

1941 թ.ի Օգոստոսին, Պերլինի մօտ Թուրքիոյ դեսպան Հուսրեւ Բերեթէն կ'այցելէր Գերմանիոյ պետական քարտուղար Վէյցապրըրը եւ խորհուրդ կու տար անոր որ Վեհրմախտը կրնար Սովետ. Միութեան թուրք ժողովուրդները սքանչելի քարոզչութեան առարկայ դարձնել: Դեսպանը կը յայտնէր թէ իր անձնական կարծիքով՝ թուրքական պետութիւն մը ստեղծուելու էր Սեւ եւ Կասպից ծովերու միջեւ եղած հողամասին վրայ: Քերեթէն կը շեշտէր թէ Պաքու թըր-

24. Գերմանիայի Արտաքին Գործերի Մինիստրութեան Փաստաթղթերը, Պրակ 2, (Գերմանական Քաղաքականութիւնը Թուրքիայում 1941-1943 թթ.), Երեւան, 1947, փաստաթուղթ քիւ 10:

25. Charles Warren Hostler, **Turkism and the Soviets**, London, 1957, p. 172.

քախօս քաղաք մըն էր եւ ժողովուրդը կ'ուզէր սովետական գերիշխանութենէն դուրս գալ: Վէյցազըրի համաձայն սակայն կանխահաս էր Սովետ. Միութենէն դրաւեալ եւ դրաւուելիք հողամասերու նկատմամբ բանակի քաղաքականութեան զարգացումը իմանալ: Պետական քարտուղարը յիշատակած էր սակայն թէ Անգարայի մէջ Գերմանիոյ ղեսպան Փոն Փափենի ներկայանալով՝ ազդեցիկ թուրքեր նման հարցերով հետաքրքրուած էին: Քերեթէի թելադրանքին մասին արտաքին գործոց նախարար Ռիպենթրոփի հետ խօսելէ ետք՝ Վէյցազըր հրահանգած էր որ Փոն Փափեն վերոյիշեալ խնդիրին սերտօղութիւնը խորացնէր²⁶:

Երբ գերման բանակին վերին հրամանատարութիւնը կը պահանջէ թուրք ղեսպանին՝ Վէյցազըրի հաղորդած տեղեկութիւններով հետաքրքրուել, ղեսպանն ու Ռիպենթրոփը՝ Օղոստոսի վերջերուն բանակի ընդհանուր կեդրոնատեղին կը հրաւիրուին: Հոս՝ ղեսպանը շատ զուսպ, իր ըրած նախկին բոլոր արտայայտութիւններէն կը հրաժարի: Թուրք ղեսպանին երկդիմի կեցուածքը կը պարզուի անով որ իր տեսակցութեան օրն իսկ երբ սովետական եւ անգլիական բանակներ սկսած էին Իրան մտնել, Քերեթէ նոյնիսկ կը յայտնէր թէ փանթ-թուրանականութեան գաղափարը թուրքիոյ մէջ մեռած էր, եւ թէ՛ իր ներկայ սահմաններէն անդին հողամասերու տիրանալու ձրղտում չունէր իր երկիրը:

Փոն Փափեն Անգարայի մէջ եւս նկատած էր դիմափոխութիւն մը, երբ Խրիմի իրավիճակին մասին խօսակցած էր Իւնէօնիւի եւ Սարաճօղլուի հետ: Երկու պետական անձնաւորութիւնները համաձայնած էին որ անյարմար էր որեւէ խօսակցութիւն ունենալ այդ մասին, մինչեւ որ գերման բանակները իրենց յառաջխաղացը Պաթում եւ անկէ անդին չհասցնէին²⁷:

Քերեթէ հաւատարմօրէն կը հետեւէր իր երկրին դիւանագիտական խաղերուն: Թուրքիոյ մէջ փանթ-թուրանականութիւնը մեռած չէր: Իւնէօնիւ Աֆղանիստանի մօտ Թուրքիոյ ղեսպան նշանակած էր Մեմտուհ Շելիքեթը՝ 1921 թ.ին Կարսի Դաշնագիրը ստորագրող

26. Weizsacker to Ribbentrop, 5 August 1941, A. A. 217/494 (DGFP, 13:284); Weizsacker to Papen, 21 August 1941, A. A. 217/ no number, as quoted by Frank G. Weber, **The Evasive Neutral**, Univ. of Missouri Press, 1979, p. 110.

27. Ribbentrop to Papen, 25 August 1941, A. A. 217/880 (DGFP, 13:373-75), Papen to Foreign Ministry, 30 August 1941, A. A. 217/1124, as quoted F. Weber, **op. cit.**, p. 111.

Թուրք պաշտօնատարներէն մէկը, որ յաճախ նշած էր թէ Թուրքիան Սովետ. Միութենէն ընդարձակ հողամասերու տիրանալու էր: Աֆղանիստան յօտարած էր այդ նշանակումին՝ Իւնէօնիւի պնդումներուն վրայ միայն: Դեսպան Ֆոն Փափեն ոչ միայն յիշած էր Շելլքեթի պարագան, այլ նաեւ այն իրողութիւնը որ երբ Վեհմարխիթը Սովետ. Միութիւն ներխուժեց, Թուրք կառավարութիւնը մօտեցաւ Սուլթան Ապալու Համիտ Բ-ի ժամանակաշրջանէն տակաւին կենդանի կարգ մը նախկին նախարարներու, որոնք փան-թուրանականութեան ջատագովներ էին²⁸: Օսմանեան պաշտօնատարները, ինչպէս նաեւ Իւնէօնիւ, լաւ կը յիշէին այն օրերը երբ Թրքական զօրքերը՝ 1918 թ-ին, կարծատեւ շրջան մը ներխուժեցին Արեւելեան Հայաստան ու Ազրպէյճան²⁹:

1941 թ-ի Օդոստոսին Ֆոն Փափեն կը տեղեկագրէր թէ էնվեր Փաշայի եղբայրը՝ Նուրի Փաշա, որ զործարանատէր դարձած էր, առեւտրական զործառնութեանց պատրուակով Գերմանիա պիտի այլտի ալցելէր՝ թէեւ իր իսկական նպատակն էր փան-թուրանական տեսակէտներու համար հող շահիլ այնտեղ: Իսկ Դեսպան Փափեն հիւանդութեան պատրուակով Պերլին կու գար, յայտնելով թէ Նուրի Փաշա Սարաճօղլուի հետ տեսակցած էր նախքան Գերմանիա դալը, թէեւ՝ այս վերջինը կը փափաքէր որ տեսակցութիւնը դադանի պահուէր³⁰:

Նուրի Փաշա կը տեսակցէր պետական ենթաքարտուղար Վերմանի հետ: Իր երկրորդ տեսակցութեան ընթացքին Նուրի Փաշա կը մատնանշէր այն հողամասերը, զորս ինք փան-թուրանական կը նկատէր: Ակնարկութիւնը կ'ըլլար Խրիմին, Անդրկովկասին (Հայաստանն ու Վրաստանը ներառեալ), Ազրպէյճանին, Ուրալեան լեռնաշղթայի եւ Վոլկա գետի միջեւ ինկող հողամասերուն, Տաղստանին եւ Թաթարական ինքնավար Սովետական Հանրապետութիւններուն: Ապա Նուրի Փաշա կ'աւելցնէր թէ Թուրքիա՝ սահմանակից արաբական երկիրներէն եւ Իրանէն եւս հողամասեր կը պահանջէր, եւ դեռ մինչեւ իսկ Չինաստանի Սինկիբանկ նահանգը կամ Արեւելեան Թուրքիստանը պէտք էր յանձնուէին Թուրքիոյ: Վերման՝ ընդհանրապէս

28. Papers to Foreign Ministry, 5 August 1941, A. A. 691/3018, as quoted by F. Weber, *op. cit.*, p. 112.

29. Նոյնը:

30. Weizsacker to Ribbentrop, 22 August 1941, A. A. 217/no number; Ribbentrop to Papen, 22 August 1941, A. A. 217/885; Weizsacker to Woermann, 10 Sept. 1941, A. A. 691/559 (DGFP, 13:473-76), as quoted by F. Weber, *op. cit.* p. 114.

Համամտութիւն ցոյց տալով Հանդերձ, միաժամանակ դիտել կու տար թէ այս ձգտումները դէմ էին Աթաթիւրքի՝ Թուրքիան ազգային պետութիւն նկատելու գաղափարին: Նուրի Փաշա կը պատասխանէր թէ այդ մէկը հետեւանք էր Աթաթիւրքի՝ Սովետ. Միութենէն ունեցած վախին եւ այդ օրերու Թուրքիոյ տկարութեան, մինչդեռ հիմա՝ Վեհրմախթը սովետական հողի վրայ էր, եւ թուրք ժողովուրդն ու բանակը փան-թուրանականութեան ջատագով³¹:

Մինչ կացութիւնը վերեւ պարզուած ձեւով կ'ընթանար, անդին՝ Թուրքո-Գերման միջ-պետական յարաբերութիւնները տակաւ կը սերտանային: 1941 թ.ի Նոյեմբերի 1-ին Թուրքիոյ Նախագահ Իսմէթ Իւնէօնի Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի բացման առիթով արտասանած իր ճառին մէջ կ'ընդդէր թէ 1941 թ.ի Յունիսի 18-ին կնքուած Թրքո-Գերման պայմանագիրը «փոխադարձ վստահութեան միտուորտ ստեղծեց», ու կ'աւելցնէր թէ «այդ ժամանակէն ի վեր թուրք-գերմանական յարաբերութիւնները, ոչ մի ժամանակ չսրուելով, կ'ընթանար բարեկամութեան ուղիով»: Եզրափակիչ իր խօսքին մէջ Իւնէօնի վստահութիւն կը յայտնէր թէ գերման եւ թուրք պայմանագիրը կը շարունակէր եւ պիտի շարունակէր ի զօրու մնալ³²:

1941 թ.ի Նոյեմբերին, Իսթանպուլի մէջ կը կազմակերպուէր թրքական հակա-սովետական կեդրոն մը: Այս կեդրոնին իրենց մասնակցութիւնը կը բերէին Զօր. Հիւսէյն Էրքիլթի, որ Զօր. Ծուստ Էնտենի հետ 1941 թ.ի Հոկտեմբերին Պերլին այցելած էր, Նուրի Փաշա, որ 1918 թ.ին Անդրկովկասի մէջ թուրք բանակ առաջնորդած էր, Միւրսել Փաշա, Իհսան Սապիտ եւ շատ ուրիշ ազգայնամոլ թուրքեր, փան-թուրքիստներ եւ թուրանականներ: Այս կեդրոնը, որ ի հարկէ ստանց թուրք պետութեան հաւանութեան չէր կրնար գործել, կը հրատարակէր «Թասֆիլի Էֆբիար», «Չինարալթը», «Պոզըրթ», «Պէօյլիք Տոզու» եւ այլ թերթեր եւ ամսագրեր: Սոյն թերթերը բացայայտ կերպով կոչ կ'ընէին Սովետ. Միութեան դէմ պատերազմ յայտարարելու եւ փան-թուրքական տեսակէտներ տարածելու³³:

Ամերիկացի հեղինակ Չարլզ Հոսլըր կը յայտնէ թէ «այդ անպատասխանատու խումբերը» թոյլատրուած էին թրքական կառավարութեան կողմէ, թուրք երիտասարդութիւնը Սովետ. Միութեան դէմ հաւանական պատերազմի մը զէպքին՝ գաղափարապէս կանխապատ-

31. Նոյնը, էջ 115:

32. Տես՝ Ռ. Սահակեան, Սովետա-Թուրքական Յարաբերութիւնների Պատմութեան Հակադիտական Լուսարանումը Ժամանակակից Թուրք Պատմագրութեան Մէջ, Երեւան, 1964, էջ 89-90:

33. Նոյնը, էջ 102:

րաստելու համար: Հոսլըրը կը գրէ. «Կարելի է եզրակացնել որ թըրքական պետութեան մէջ բարձրաստիճան անձեր պատրաստի ծրագիրներ իրագործելու բոլոր հնարաւորութիւնները ունէին, եւ թէ՛ դերմանա-սովետական պատերազմին մէջ ՍՍՀՄ-ի կործանումը կարող էր առիթը ստեղծել փան-թուրքական դադափարներու իրակաւնացման»³⁴:

Թուրք հեղինակ Ալտեմիւր Գըլըճ կ'ընդունի որ թրքական պետութիւնը՝ նկատի առած ՍՍՀՄ-ի սահմաններուն մէջ բնակող «ճնշուած թուրքերու» հանդէպ թուրքիոյ մէջ ստեղծուած համակրանքը, եւ Սովետ. Միութեան հաւանական մօտալուտ պարտութիւնը, որոշ պատրաստութիւններ կը տեսնէր Սովետ. Միութեան սահմանամերձ թրքական նահանգներու «ապարայի խնդրին մէջ ձայն ունենալու համար»³⁵:

Նացի Գերմանիոյ Սովետ. Միութեան վրայ կատարած ներխուժումէն ետք, հրապուրուելով նացիներու խոստումներէն, կամ՝ այլազան յոյսերով ներշնչուած, Պերլին սկսան հաւաքուիլ իշխանութենէ հեռացուած Անդրկովկասեան, Կովկասեան կամ Անդրկասպեան այլազգի նախկին ղեկավարներ: Ասոնց շարքին էին թուրքիստանցի Վելի Բալում-խան, «Մուսավաթ» կուսակցութեան պետ՝ ազդէյ-ճանցի Մեհմետ Էմին Ռեսուլզատէ, Բազանի թաթար Այաս Իշաքի, հիւսիսային կովկասցի Սաիտ Շամիլ, Խրիմի թաթարներէն Մուսթեկիպ Ֆասիլ եւ Էտիճէ Բիրիմալ, ինչպէս նաեւ բազմաթիւ թուրք քաղաքական ղէմքեր եւ անպաշտօն ներկայացուցիչներ, եւ նախկին Զօր. էրքիլէթ: Գերման զբաւման ենթակայ Վարչաւիոյ մէջ բնակող պրոմթէական ղեկավարներ նմանապէս նացիներու օգտակար եղան³⁶:

Պերլինի մէջ բնակութիւն հաստատած էր վրացի Ալեքսանդր Նիքոլրաձէն: Պերլին կը ժամանէին նաեւ վրաց զահը պահանջող կոմս Բազրատիոն եւ այլ անձնաւորութիւններ: Նացիներու հետ համադործակցելու տրամադրութիւն ցոյց տուող հայ քաղաքական ղեկավարներ ալ գոյութիւն ունէին:

1940 թ.-ի երկրորդ կիսուն, Վիշիի ֆրանսական կառավարութեան արտօնութեամբ Ալեքսանդր Խատիսեան եւ Արշակ Զամալեան Պերլին այցելած էին³⁷: 1941 թ.-էն սկսած, Առանցքի ենթակայ կամ անոր համակիր Ռումանիայէն, Պուլկարիայէն, Ֆրանսայէն, Պելճի-

34. Ch. Hostler, **Turkism...**, p. 180.

35. Altemur Kilic, **Turkey and the World**, Washington, 1950, p. 112.

36. Ch. Hostler, **Turkism...**, p. 172.

37. Էլլէմ Բիւզանգ, Մեր Աւագ Ընկերները Փարիզում, «Հայրենիք» ամսագիր (Պոսքըն), 1964, քիւ 7, էջ 40:

բային, Յունաստանին եւ այլ երկիրներէ Պերլին կը հասնէին Ն. Յ. Դաշնակցութեան ղեկավար եւ զործօն տարրերէն՝ Դրաստամատ Կանայեան (Դրօ), Արբաճամ Կելլիանդանեան, Վահան Փափազեան (Կոմս), Գնդ. Տիգրան Բազդասարեան, Սահակ Տէր Թովմասեան, Արմիկ Զամայեան, Աշոտ Իսահակեան, Զարդարեան եղբայրներ, Բենօ Նալչաճեան, Լեւոն Պեկ, Արտօ Ատոմեան, Յարութիւն Յարութիւնեան, Միսաք Թորլաքեան, Կարօ Գէորգեան եւ ուրիշներ, ինչպէս նաեւ Կուսակցութեան հետացուած Գ. Նժդէհ³⁸։ Անոնք Պերլին կը համախմբուէին 1941-1942 թթ.ուն, թէեւ անոնցմէ ոմանք, ինչպէս Յակոբ Ազիզեան, 1941 թ.ին «ոռւս-դերմանական պատերազմի նախօրեակին կու գայ Գերմանիա, զործակցելու Դրոյին»³⁹։ Վերոյիշեալներուն կը միանան նաեւ նախապէս Պերլին հաստատուած Դոկտ. Արտաշէս Արեղեան, Դաւիթ Դաւիթխանեան եւ ուրիշներ⁴⁰։ Արդէն Բարիզէն Պերլին փոխադրուած էր Հայ Ազգայնականներու Միութեան «Ազգ» թերթը՝ «Կովկաս» վերանուանուած, որ լոյս կը տեսնէր Վիզէն Լ. Շանթի խմբագրութեամբ⁴¹։

Զօր. Ալի Ֆուատ Էրտէն եւ փան-թուրքիստ Հիւսէյն Էրքիլթ 1941 թ.ի Հոկտեմբերին պաշտօնական այցելութեամբ Գերմանիա կը ժամանէին։ Գերմանացիները կը ջանային Առաջին Համաշխարհային Պատերազմի գերմանօ-թուրք զործակցութեան յիշատակները արթնցնել։ Ապա՝ վերոյիշեալ երկու անձնաւորութեանց մօտ տպաւորութիւն ստեղծելու մտահոգութեամբ, այցելութեան մը համար զանոնք կը տանէին Արեւելեան ճակատ⁴²։ Պերլինի կառավարութիւնը տպաւորուած էր թուրք կառավարութեան՝ փան-թուրքիստներու զործունէութեան հանդէպ ցուցարերած դիրքէն, սակայն զգուշօրէն կը շարժէր, քանի որ թրքական շահերը կը պահանջէին Միջերկրականի մէջ ուժերու հաւասարակշռութեան պահպանումը, որովհետեւ իտալական ամբողջական հսկողութիւն մը այնտեղ՝ կարող էր տկարացնել կամ կործանել թուրքիան։ Միւս կողմէ՝ թուրքիան հանդարտութեամբ չէր կրնար դիտել Բրիտանական Կայսրութեան անկումը,

38. Կարօ Գեորգեան, Հայ Տարագիրները Գերմանիոյ Մէջ Երկրորդ Աշխարհամարտի Ընթացքին եւ Ատկէ Ետք, «Ամեմուն Տարեգիրք», Խմբ. Կ. Գեորգեան, Ա. Տարի, Պէյրութ, 1954, էջ 136։ Միսաք Թորլաքեան, Օրերուս Հեռ, Պէյրութ, 1963, էջ 533, 559, 569-575։ Ն. Սիմոնեան, Սփիւռքահայութիւնը..., էջ 419-420։ Ա. Մնացակմեան, Միանական Շարքերու, Երևան, 1975, էջ 18։

39. Մ. Թորլաքեան, Օրերուս Հեռ, էջ 531։

40. Կ. Գեորգեան, Հայ Տարագիրները..., էջ 136։

41. «The Caucasian Quarterly», Berlin, 1940, p. 84.

42. A. Dallin, **German Rule...**, p. 233-235.

եւ պարտաւորուած կը զգար չէզոք մնալու, որքան ատեն որ իրերու կացութեան մէջ տակաւին մեծ փոփոխութիւններ չկային :

Այսուհանդերձ՝ եւ Գերմանիոյ եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնները համակիր էին պատերազմին մէջ գերմանոթուրք համագործակցութեան, ուստի՝ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը կը ծրագրէր աւելի առաջ երթալ եւ գործակցիլ փրոթուրք կողակացի տարազիրներու հետ : Այսպէս՝ 1941 թ. ի վերջին շրջանին փանթուրքիստ ղեկավարներ Պերլին կ'այցելէին : Իսկ Հիթլեր, Յոն Փափեն եւ Նուրի Փաշա տեսակցութիւններ կ'ունենային :

Փանթուրքիստ գործիչներու տրամադրութիւնները կը բացայայտուին Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան 10 Նոյեմբերի, 1941 թուակիր թիւ 12 փաստաթուղթին մէջ, ուր ի միջի այլոց գրուած է. «... [Թրքական զօրավար] Ալի Ֆուատ այն հետեւողութիւնն է արեւ, որ Յիւհրերը որքան կարելի է արագ հասնելու է կասպից ծովին եւ կովկասին»⁴³ :

Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան 24 Նոյեմբերի, 1941 թուակիր թիւ 14 փաստաթուղթին մէջ յստակօրէն կը բացայայտուի թուրք ղեկավար շրջանակներու բուն հետաքրքրութիւնը՝ գերմաններու միջոցով փանթուրանական իրենց ծրագիրները իրականացնելու հնարաւորութեանց հանդէպ :

Գերմանիոյ արտաքին գործավարութեան աշխատակից Հենթիլը, այլ պաշտօնատարներու՝ էրդմանստրոֆին եւ Վերմանին կը հաղորդէր թէ 17 տարի իսթանպուլ պաշտօնավարած եւ թրքական հարցերու մասնագէտ՝ գերման Դոկտ. Հարունը, ցանկութիւն կը յայտնէր իմանալու Գերմանիոյ դիրքը փանթուրանիզմի մասին : Թրքական սպայակոյտի պետ Ֆելիքի Չաքմաք եւ Պերլինի մօտ Թուրքիոյ ղեկսպան Հուսրեւ Բերեթէ կը յայտարարէին թէ իրենք անձնապէս վերին աստիճանի շահադրդուած են փանթուրքիզմի հարցով, թէպէտ հնարաւորութիւն չունին պաշտօնապէս այդ մասին հրապարակ դալու : Չաքմաք կը յայտարարէ թէ «թրքական հարցի հիման վրայ կարելի է կազմաւորել Թուրքիոյ ու Գերմանիոյ յարաբերութիւնը» : Հենթիլ կ'եզրակացնէր թէ Չաքմաք «մեծ հետաքրքրութեամբ է հետեւում թրքական ժողովրդների հանդէպ ունեցած մեր վերաբերմունքին : Ռազմագէտների շրջանում տարուելիք

43. Գերմանիայի Արտաքին Գործերի Մինիստրութեան Փաստաթղթերը, փաստաթուղթ թիւ 12 :

աշխատանքի համար նա պատրաստ է մարդիկ դնել մեր տրամադրութեան տակ»⁴⁴ :

1941 թ.-ի Յուլիս եւ Օգոստոս ամիսներուն մէջ դեսպան Յոն Փափենի ունեցած խօսակցութիւնները թուրք կառավարութեան անդամներուն հետ, եւ իր կատարած խոստումները ի վնաս Սովետ. Միութեան, պատերազմի ընթացքին իսկ դադտնի չէին մնար : Դեսպանը 1941 թ.-ի Օգոստոսի 5-ին Պերլին տեղեկագրած էր թէ թուրքեր՝ սովետ-թրքական սահմաններէն անդին գտնուող մարզը (իմա՝ Սովետ. Հայաստան ու Սովետ. Վրաստան) եւ Պաքուի մեծարժէք նալթրահորերը (իմա՝ Սովետ. Ազրպէյճան) կ'ուղէին իրենց սահմաններուն կցել⁴⁵ : Անգլիական Յորէյն Օֆիսին հասած տեղեկութիւնները դեռ Յուլիսին յայտնած էին թէ Յոն Փափեն, թուրքերուն՝ սովետներէն գրաւուելիք անդրկովկասեան հողամասեր խոստացած էր : Մինչեւ իսկ դերման դեսպանը վարչապետ Սարաճօղլուի եւ արտաքին գործոց նախարար Մենիմճիօղլուի հետ զրոյցներ ունեցած էր Խրիմի եւ Կովկասի մարզերը կառավարելու ծրագիրներուն կապակցութեամբ⁴⁶ :

Վերոյիշեալ խոստումները, որոնց անգլիական տեղեկագրին լրիւ պատճէնը սահմանուած է դադտնի մնալու Անգլիոյ արխիւներուն մէջ մինչեւ 1992 թ., օրին սակայն, միջազգային մամուլին մէջ արձագանգ կը դտնէին, հաւանօրէն տուեալ երկրի դադտնի սպասարկութեանց լրատուութեամբ : Արդարեւ՝ նման արձագանգ մըն է լրագրող Ֆրանք Ճըրվեսի հետեւեալ գրութիւնը, որ կը հրատարակուէր 1941 թ.-ի Դեկտեմբերի 2-ին, անգլիատառ «Քոլլերըզ» շաբաթաթերթին մէջ :

«... Անգլիոյ հետ իր ստորագրած դաշինքին հաւատարիմ մնալու մասին մենք տեւականօրէն կը լսենք Անգարայի ռատիոկայանին անգլերէն եւ ֆրանսերէն հաղորդագրութիւններէն : Բայց դերմանեւսովետ պատերազմին սկզբնաւորութենէն ի վեր նոյն այդ Անգարայի ձայնասիւնուն արարերէն բաժանմունքը ցոյց կու տայ, թէ դերման դեսպան Ֆրանց Յոն Փափեն ժամավաճառ չ'ըլլար Անգարայի մէջ :

«Ռաշիտ Ալի Կէյլանիի [Իրաքի մէջ] շղթայազերծած ապստամբութեան ընթացքին, թուրքիա մերժեց անցը տալ դերմանական այն նաւերուն, որոնք զօրք ու ռազմանիւթ կը տանէին դէպի Իրաք : Երբ Վիշիի կառավարութիւնը թուրքիայէն արտօնութիւն ուղեց զինուոր

44. Նոյնը, փաստաթուղթ քիւ 14 :

45. Նոյնը, փաստաթուղթ քիւ 11 :

46. F. O. 371/R./6472/1934/44,

ու ուղղմանը թ ղրկելով Սուրբիոյ իր բանակը զօրացնելու համար, Անգարա «ո՛չ» պատասխանեց :

«Բայց հակառակ թրքական քաղաքականութեան անդլիասէր այս ուղղութեան, նկատի առնուելու են հետեւեալ իրողութիւնները :

«Բացարձակապէս արժանահաւատ տեղեկագրերէ կը պարզուի, թէ Ֆրանց Ֆոն Փափեն Թուրքիոյ խոստացած է Հայաստանն ու Ազըրպէյճանի սահմանամերձ շրջանները՝ եթէ Թուրքիա չէզոք եւ ոչ պատերազմիկ մնայ : Ազրպէյճանի բնակչութեան 75 առ հարիւրը թուրք է : Մինչեւ նախորդ պատերազմը Հայաստանը թրքական հողամաս մըն էր : Ազրպէյճանը բովանդակ Սովետ. Միութեան ամենէն հարուստ շրջաններէն մէկն է : Հակառակ Մուսթաֆա Գեմալի (Աթաթիւրք) բացայայտ հակադերման մտայնութեան, նացի Գերմանիոյ ներկայ վարիչները լաւ տրամադրութիւններ կը սնուցանեն Իւնէօնիի Թուրքիոյ հանդէպ, որովհետեւ, ներկայի Լիզպոնին եւ նախապատերազմեան Ամսթերտամին հետ, Անգարան, զերման լըրտեսութեան համար լա՛ւ կեզրոն մըն է . . . »⁴⁷ :

Նացի Գերմանիոյ ծրագիրները կը բխէին զանազան կողմասի նկատմամբ : Արդէն վերջ գտած էին զբաւման եմթահոլը պատրաստող այլազան միջոցառումները : Հիթլեր՝ 1941 թ.ի Նոյեմբերի 19-ին, զերման բանակի բարձր հրամանատարութեան երկարօրէն կը զրուցէր իր ծրագիրներուն մասին : Զօր. Ֆրանց Հալտըր իր ատենագրութիւններուն մէջ կը խոսացնէր Հիթլերի մտածումները. «Նպատակակէտեր յառաջիկայ տարուան համար : Նախ եւ առջ կողմասը : Նպատակ. Ռուսիոյ հարաւային սահմանները : Ժամանակ. Մարտէն Ապրիլ [1942 թ.] : Հիւսիսի մէջ ներկայ տարուայ կռիւններու աւարտին, Վալախտա կամ Կորքի, բայց միայն Մայիսի վերջին»⁴⁸ :

Նպատակակէտերը ճշդուած էին, բայց անոնց հասնելու միջոցներուն մասին կային տարրեր ծրագիրներ :

Գերմանիոյ Նացի կուսակցութեան ղեկավարութիւնը, կառավարութիւնը եւ բանակի բարձրաստիճան սպաները նոյն մօտեցումը չունէին կողմասի քաղաքական ապագային եւ կողմասի ժողովուրդներու հանդէպ իրենց որդեգրելիք ուղեղիծին նկատմամբ :

Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Ռիպենթրոփ եւ Էս. Էս. ներու Գերման Կեսթափոյի պետ՝ Հիմլեր, «Արեւելեան զբաւեալ

47. Տես՝ «Զարբօն» օրաթերթ (Պէյրուս), 2 Դեկտեմբերի, 1967, քիւ 57 (9004) :

48. William L. Shirer, **The Rise and Fall of the Third Reich**, New York, 1967, p. 248.

չըջաններ» ու հարցի մէջ փան-թուրքական հակումներ ցոյց կու տային եւ նուազագոյն համակրանքը ունէին անկախութեան ի նպաստ յայտարարութեան մը: Նացի կուսակցութեան տեսարան Ալֆրետ Ռոզենպերկ՝ ցեղերու «իրապաշտ զանազանութեան» եւ որոշ շրջաններու անկախութեան ճանաչման կողմնակից էր: Իսկ Հիթլեր, որ ասիական ժողովուրդներու հանդէպ ատելութիւն կը սնուցանէր եւ ոչ մէկ բանի կարելորութիւն կ'ընծայէր, առանց պայմանի ծառայութիւն կը պահանջէր եւ կը յուսար այն օրուան երբ զերման լուծը պիտի նետէր Կովկասի վրայ⁴⁹:

1941 թ. ի Մայիսի սկիզբներուն, նացի տեսարան Ալֆրետ Ռոզենպերկ պատրաստած էր Գերմանիոյ կողմէ գրաւուելիք Սովետ. Միութեան շուրջ իր ծրագիրը: Համաձայն այդ ծրագրին՝ Սովետ. Միութեան եւրոպական աշխարհամասը պիտի բաժնուէր այսպէս կոչուած Ռայխ Գոմիսարիաթներու: «Ռուսական Լեհաստանը, պիտի կոչուէր Օսթլանտ, եւ պիտի ըլլար գերմաններէ «պաշտպանեալ» շրջան: Ուրբանիան պիտի յայտարարուէր անկախ պետութիւն մը գերմաններու հետ զինակցութեամբ»: Կովկասը պիտի կառավարուէր գերման լիազօր ներկայացուցիչի մը կողմէ, իսկ Պալթեան երեք պետութիւնները եւ Պելոուսիան պիտի հռչակուէին գերմաններէ «պաշտպանեալ շրջան», նախքան իրենց կցումը Մեծն Գերմանական Ռայխին⁵⁰:

Ռոզենպերկ վերոյիշեալ իր ծրագիրը՝ «Յուշադիր թիւ 1», ներկայացուցած էր Հիթլերին եւ էս. էս. ի պետ Հիմլերին, որոնք հաստատած էին դայն: Ըստ ծրագրին՝ կը ջնջուէին Սովետ. Միութեան հանրապետութիւնները, որոնց շարքին եւ Սովետ. Հայաստանը: Ամբողջ «գրաւեալ Սովետ. Միութիւնը» պիտի բաժնուէր հինգ Ռայխ Գոմիսարիաթներու, որոնք իրենց կարգին պիտի բաժնուէին «զլխաւոր կամ ընդհանուր քոմիսարիաթներու»⁵¹:

1941 թ. ի Յուլիսի 17-ին կը ստեղծուէր «Արեւելեան գրաւեալ շրջաններ» ու նախարարութիւնը, որուն նախարար կը նշանակուէր Ալֆրետ Ռոզենպերկը: Իսկ օր մը առաջ, 1941 թ. ի Յուլիսի 16-ին, Հիմլեր Կովկասի Ռայխքոմիսար նշանակած էր Առնոյ Շեկեղանցին: Այս վերջինը, ղեռ Կովկասն իսկ չգրաւուած, կը կազմէր իր պաշտօնատարական վարչամեքենան՝ բազկացած 1200 միաւորներէ: Նոյնիսկ կը նշանակուէին ոստիկանապետերն ու զինուորական գործերու պե-

49. Caroe Olaf, **Soviet Empire, The Turks of Central Asia and Stalinism**, New York, 1967, p. 248.

50. W. Shirer, **The Rise...**, p. 832.

51. Ա. Մնացականեան, **Միասնական Շարքերում**, էջ 15:

տը: Գրաւումը իրականացնելէ ետք կարելի պիտի ըլլար ստեղծել տեղական զօրամասեր, որոնք սակայն պիտի ունենային գերմանացի սպաներ⁵²:

Նացի ցեղապաշտական հիմունքներով պատրաստուած գերմանական այս ծրագրի տրամադրութեանց համաձայն, պիտի փոխուէին շրջանի բոլոր քաղաքներուն անունները, ներառեալ՝ Սովետ. Հայաստանի մայրաքաղաք Երեւանի անունը: Անոնց պիտի տրուէին գերմանական անուններ⁵³:

1942 թ.ի սկիզբներուն գերմաններուն համար յայտնի կը դառնար թէ Թուրքիոյ մէջ ծաւալած փան-թուրանական զգացումները ամբողջական համամտութիւնը չունէին այլ երկիրներու թուրքերուն: Սովետ. Միութեան մէջ ապրող թրքալեզու ժողովուրդները չէին ուզեր Քեմալական հանրապետութեան լուծին տակ իյնալ: Թուրքիոյ արեւելքը ապրող թուրանականները ցեղայնօրէն ինքզինքնին աւելի մաքուր եւ աւելի մօտ կը նկատէին առաջին օսմանցի ներխուժողներուն, քան՝ ցեղերու խառնուրդ Թուրքիոյ լեւանթեան թուրքերուն⁵⁴: Այսպէս մտածողներու ղեկավարն էր Մեհմետ Էմին Ռեսուլզատէն, որ կ'երազէր «Մեծն Ազրպէյճան» մը՝ Սովետական եւ Իրանական Ազրպէյճաններու միացումով: Ան տրամադիր կը թուէր Գերմանիայէն եւ Թուրքիայէն օժանդակութիւն ստանալու, բայց չէր ուզեր ռազմախարխիւններ իսկ տրամադրել անոնց, ինչ որ նացիներու նախապայմանն էր իրեն օժանդակութիւն տալու⁵⁵:

Գերմանիոյ հետ գործակցող վրացի եւ հայ ղեկավարները նոյնպէս կը յայտնէին թէ դէմ էին փան-թուրանականութեան, կամ՝ Անդրկովկասէ ներս Թուրքիոյ ներկայութեան:

Վրացիք յայտնած էին թէ թուրք բանակի ռազմունակութեան չեն վստահիր: Թէ Թուրքիան կրնար ժամանակաւոր կերպով գրաւել Վրաստանը, բայց Սովետ. Միութիւնը զօրանալէն ետք կարող էր վերադարձել երկիրը, եւ վրացիք կրնային տուժել: Ուրեմն՝ ըստ գերման տեղեկագիրներուն, վրացիք կը նախընտրէին Վրաստանի գրաւումը Վեհրմախթի կողմէ⁵⁶:

52. Նոյնը, էջ 16:

53. Նոյնը:

54. F. Weber, **The Evasive...**, p. 122.

55. Tippelskirch to Hentig, 28 January 1942, A. A. 691/VAA 293, as quoted by F. Weber, **op. cit.**, p. 123.

56. Նոյնը:

Պատմարան Ծրանք Ճ. Ուեպըր, հիմնուելով գերմանական արխիվներէն քաղուած վաւերացութեամբ գրուած վրայ, գերմաններու հետ գործակցող հայերու մասին կը գրէ —

«Կարգ մը հայեր նաեւ կը փափաքէին որ իրենց երկիրը յանձնուի ուղղակի գերման վարչութեան: Գերմանացիները Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հետ կապի մէջ էին 1940 թ.ի դարունէն ի վեր, երբ Վեհմարտի զրաւեց Փարիզը: Ծրանսայի մայրաքաղաքին մէջ ապրող բազմաթիւ հայ դաւադիրներէն էին՝ «գորավարներ» Դրօ եւ [Վահան] Փափաղեան, Ֆետայիներ, որոնք անմիջապէս իրենց ծառայութիւնը առաջարկեցին Գերմանիոյ, այն յոյսով որ կրնան համոզել Պերլինը՝ իրենց երկիրը չվաճառելու թուրքերուն, Անգարայի հետ զինակցութեան մը փոխարէն: Ռուսահայերը Ստալինի [իշխանութեան] տակ դիւրին վիճակ մը չունէին, բայց աւելի վատ չէր քան իրենց ազգակիցներուն [վիճակը] Առաջին Համաշխարհային Պատերազմին, [երբ անոնք] ստուապած էին Երիտասարդ Թուրքերուն [ձեռքին] տակ: Հաշիւները կը տարբերին, բայց մօտաւորապէս 750,000 հայեր սուլթանին կառավարութեան կողմէ մաքրագործուեցան «սպահնոփական պատճառներով»: Դրօ, Փափաղեան, եւ իրենց հայրենաթող երկրակիցները չէին ուզեր այդ ջարդին կրկնումի վտանգը եւ ատոր յտակ սպաննալիքը տեսան փան-թուրանականութեան ծագումին մէջ: Անոնք կը պնդէին Թուրքիայէն կատարեալ անկախութեան վրայ, երաշխաւորուած Առանցքի Նոր Կարգին կողմէ: Այս հայերը պիտի համաձայնէին միանալ Կովկասեան դաշնակցութեան մը, որուն անդամ էր Թուրքիան, բայց բնաւ երբեք՝ եթէ Թուրքիան ըլլար [այդ դաշնակցութեան] պարագլուխը: Հենթիկ, թուրանական հարցերու իբր խորհրդատու, [Հ.Յ.] Դաշնակցութեան նպատակները բաւական յարմարելի կը դտնէր գերման քաղաքականութեան աւելի երկարաշունչ նպատակներուն: Հենթիկի համար, կարեւորութիւն չունէր եթէ երբեք Ազրպէյճան եւ Վրաստան թըրքական հսկողութեան ենթարկուէին, բայց ան գորաւոր կերպով կը զգար որ Հայաստան պէտք չէր յանձնուէր թուրքերուն՝ որքան ալ Անգարայի պահանջները առ այդ ազմկարար ըլլային. սակայն Հայաստանը՝ գերմաններուն կողմէ հարկ էր կազմակերպել իբր արդեւակ պետութիւն մը (buffer state) Սովետական Միութեան դէմ: Հենթիկ հայերը կը նկատէր մասնաւորապէս տաղանդաւոր ժողովուրդ: Ան հայերը կ'արժեւորէր իբր մեծ խելացիութեան, միջազգային լայն կապերու եւ զիմացկուն կարծրութեան տէր ժողովուրդի: Բոլոր կովկասեան ժողովուրդներէն, ամենայն վստահութեամբ ան հայերուն յանձնարարեց գերման շարքերէն ներս զինուորագրուիլ: Հենթիկ կը կանխատեսէր որ անոնք առաջին կարգի հրոսակային

կռուողներ կրնային ըլլալ, որոնցմէ սովետները պիտի վախնային»⁵⁷ :

Հետագային՝ Կովկասի նկատմամբ իր մշակած ծրագիրներուն մէջ Ալֆրետ Ռոզենպերկ նկատի առաւ Հենթիկի՝ Հայաստանը արգելակ պետութեան մը վերածելու թելադրանքը :

Էմին Ռասուլզատէի, իրեն հետեւող ազրպէյճանցիներուն ու անոնց հետ գործակցող վրացի եւ հայ անձնաւորութիւններուն փանթուրանականութեան դէմ ունեցած դիրքորոշումը ի մտի ունենալով, ու մեկնելով դերմանական շահերէն (հակառակ փանթուրանականութեան հետ ունեցած սկզբնական շփումներուն), կը թուի թէ Գերմանիա հետագային որոշեց չչարունակել Սովետ. Միութեան հաշտոյն թուրքիոյ հողային փառասիրութիւններուն տրուած քաջալերանքը, բացի՝ Պրիմի մարզէն : Նոյնիսկ քուրամալիանուքիւն բառը՝ Պերլինի Վիլհելմ շթրասէի գրասենեակներուն մէջ փոխարինուեցաւ Թիմոթիզմ եւ Տադստանիզմ բառերով⁵⁸ : 1941 թ.ին Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը թուրքիան պատերազմէն ներս իր կողքին ներգրաւելու համար քաջալերած էր անոր փանթուրանական ծաւայողական ախորժակները, որ կը թուի թէ, ինչպէս անգլիական Ֆորէյն Օֆիսի վաւերաթուղթերը կը հաստատեն, դեռ մարած չէին 1942 թ.ի Օգոստոսին⁵⁹ : Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան թուրքիոյ նկատմամբ կեցուածքին մէջ որոշ փոփոխութիւն ըլլալով հանդերձ, այդ նախարարութիւնը կը մնար թրքասէր : Գերմանիա կ'ուզէր Պաքու հասնիլ եւ գրաւել Կովկասը առանց խոչընդոտներու, որոնք կրնային ստեղծուիլ շրջաններու արտասահման ապրող նախկին կառավարողներու կողմէ, եւ կամ թուրքիոյ, որ կրնար ընդհարումներու դուռ բանալ Գերմանիոյ եւ կովկասեան ազգերուն միջեւ :

Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան եւ իր ղլխաւորին՝ Ֆոն Ռիպենթրոփի փանթուրքական շրջանակներուն մերձենալու քաղաքականութիւնը պատճառ եղաւ որ կարծիքներու բախում մը սկսի վերոյիշեալ նախարարութեան եւ Ալֆրետ Ռոզենպերկի դըլխաւորած «Արեւելեան գրաւեալ շրջաններ»ու նախարարութեան միջեւ : Գրաւուելիք Կովկասի մէջ ո՞ր բնիկ տարրը պիտի ընտրուէր իբր գործակից : Արտաքին գործոց նախարարութիւնը կ'ուզէր վստահիլ փանթուրքական տարրին, մինչ «Արեւելեան գրաւեալ շրջան-

57. Hentig to Woermann, 20 January 1942, A. A. 691/VAA 293, as quoted by F. Weber, **op. cit.**, p. 123-124.

58. Նոյնը, էջ 125 :

59. F. O. 371/R 5618/2713/44.

ներ» ու նախարարութիւնը եւ Ռոզենպերկ կը փափաքէին վստահել վրացիներու⁶⁰։ Հիթլերի հրամանով կազմակերպուած «Կովկասի Իւրացման Շտապ»-ին ղեկավարութիւնը վստահուած էր Ռոզենպերկի⁶¹։

Դատած ղէպքերու ընթացքէն, կարելի կ'ըլլայ եղբակացնել թէ Ռոզենպերկ կը յաղթանակէ։ Ռոզենպերկի գրասենեակը Կովկասի քաղաքական ապագային մասին ծրագիրներ կը մշակէ։ Կովկասը (Reichskommissariat Kaukasien (RRK)) պիտի բաժնուէր եօթը ջոմիսարութիւններու՝ Վրաստան, Ադրպէյճան, Հիւսիսային Կովկասի Լեոնականներու (տաղստանցի) շրջան, ինչպէս նաեւ Քրասնոտարի եւ Ստարոփոլի (Վորոշիլովսք) վարչական միաւորները իբր ընդհանուր ջոմիսարութիւններ։ Իսկ ցանցառօրէն բնակուած Քալմուկ շրջանը (որ ընդարձակուած էր ներգրաւելով Աստրախանն ու Ռոստովի նահանգին մէկ մասը) եւ Հայաստանը՝ իրենց աւելի «ցած աստիճան» գրութեան հետեւանքով որոշ չափով աւելի ցած աստիճանի կարեւորութիւն ունեցող միաւորներ պիտի ըլլային, «զլիսաւոր ջոմիսարութիւններ (Hauptbezirke) անուան տակ⁶²։

Ռոզենպերկ՝ շատ վստահ որ գերմանական բանակները պիտի դրաւէին Կովկասը, արդէն իսկ Կովկասի գերման կառավարիչին՝ Թիֆլիսի մէջ ունենայիք ապարանքին յատակադիժերը պատրաստել տուած էր։ Ռոզենպերկ Թուրքիա կը զրկէր անձնաւորութիւն մը, որ ինքզինք մամնուրէք կը ներկայացնէր իբր Թիֆլիսի կառավարիչ⁶³։

Գերմաններու հետ գործակցող հայերը կը վախնային որ վրացիներէ տիրապետուած Կովկաս մը իրենց ղէմ զատողութեան պիտի առաջնորդէր։

Հայերու քաղաքական ապագային մասին վիճաբանութեանց ընթացքին Ռոզենպերկ կ'ազդարարէր որ հայեր «ընչ լաւ յատկութիւններ ունէին իրենց գրացիներուն բազդատմամբ»։ Հայերու նկատմամբ գերման ժողովուրդի նախապաշարումը՝ թէ անոնք լեւանթին առեւտրականներ են հրեաներէն ոչ շատ տարբեր, խոր արմատ ձգած էր նացի շրջանակներու մէջ, եւ ցեղապաշտ «մաքրակրօններ» ներառեալ Հիթլերը, հայերը կը զիտէին իբր ոչ-արիականներու, տեսակէտ՝ զոր վրացի շովինիստները կը քաջալերէին⁶⁴։ Հայ ռազմազերիներուն եւ զաղթականներուն հանդէպ գերմաններու մօտեցումը այդ զատողական ոգին յաճախ կը ցուցաբերէր։

60. A. Dallin, **German Rule...**, pp. 235, 253.

61. Բ. Գրիգորեան, Հայ ժողովրդի Մասնակցութիւնը..., էջ 19։

62. A. Dallin, **German Rule...**, p. 231.

63. Ch. Hostler, **Turkism...**, p. 183.

64. Ch. Dallin, **German Rule...**, p. 229.

Ռոզենպերկ, Հայաստանի տեղ մը տուած էր իր ծրագրին մէջ, քանի որ «Հայաստանը լաւագոյն դօտին էր Թուրքիոյ եւ Ազրպէյճանի միջեւ, որ կ'արգիլէր փան-թուրանական շարժումին դէպի արեւելք տարածումը»⁶⁵ :

Ալֆրետ Ռոզենպերկ, Ռուսիա ծնած գերմանացի մը, որ նացի տեսաբանը կը նկատուէր, գերմանահպատակ դարձած վրացի զինանական Ալեքսանդր Նիքուրաձէի բարեկամն էր 1920-ական թուականներէն ի վեր: Նիքուրաձէ, որ բաւական համբաւ չհասած էր Գերմանիոյ մէջ, համոզած էր Ռոզենպերկը վրացիներու արիական մաքրացեղ ըլլալուն⁶⁶: Ռոզենպերկ կը փափաքէր որ վրացիք գերմաններու ստեղծելիք Կովկասեան դաշնակցութեան տանտէրը ըլլան: Իսկ սոյն Կովկասեան դաշնակցութիւնը՝ ըստ Ռոզենպերկի, Գերմանիայէն պիտի աղաչէր որ իրենց մշակութային եւ ազգային գոյութիւնը ապահովէր: Ռոզենպերկ՝ Պերլին-Թիֆլիս նոր առանցք մը կը յուսար կազմել, գերման ազդեցութեան ենթակայ վրացիներու ենթարկուելիք Կովկասին շնորհիւ⁶⁷ :

Վերոյիշեալ բոլոր ծրագրերն ու երազները փուլ եկան սակայն Նացի Գերմանիոյ կրած պարտութեամբ:

65. Document 1520-PS, Trial of the Major War Criminals, Nuremberg International Military Tribunal, 1947-1949, XXVII, p. 289.

66. A. Dallin, **German Rule...**, p. 89; David Lang, **A Modern History of Georgia**, London, 1962, p. 259.

67. A. Dallin, **German Rule...**, p. 229.

THE PLANS OF NAZI GERMANY AND THE PAN-TURANIANS IN THE CAUCASUS (1941)

ZAVEN MESSERLIAN

(Summary)

When in 1942 Germany undertook its second attack against the Soviet Union under its code name of **Ost**, it had already decided to occupy the Caucasus, annihilate a large part of the population of Armenia, and deprive the country of political and national-cultural rights. This German plan particularly interested Turkey, which sought to realize its pan-Turanian ambitions through the assistance of Germany, whose military operations depended upon the cooperation of Turkey. Within the German ruling class the conflicting pro-Georgian and pro-Turkish factions created difficulties for Turkey. However, the defeat of Germany put an end to all German and Turkish plans in the Caucasus.